ՉԻՆԱԿԱՆ ԳՐՈՂ ՄԱՈ-ԴՈՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՍԻՆ

1947 թվի հունվարի 29-ին Երևան ժամանեց չինական հայտնի գրող Մաո-Դունը, որը փետրվարի 2-ին մեկնեց Մոսկվա. մեկնելուց առաջ նա Հայկական հեռագրական գործակալության թղթակցի հետ ունեցած զրույցի ժամանակ հայտնեց.

Երևանում ես շատ քիչ մնացի, ընդամենը չորս օր, բայց այդ կարճ ժամանակամիջոցում ես պարզ պատկերացում ստացա հայ ժողովրդի մասին։ Ես իմացա, որ հայկական հին կուլտուրան դեռ 5-րդ դարում հասել էր իր ծաղկմանը։ Դրա հետ միասին ես իմացա նաև, որ հայ ժողովուրդը ենթարկվել է օտարերկրացիների բազմաթիվ ներխուժումներին։ Ուստի ժողովրդի մի մասը հարկադրված է եղել պանդխտել աշխարհիս բոլոր անկյունները։ Այդ պայմաններում հայ ժողովուրդը գործադրել է ամեն ջանք իր ազգային կուլտուրան պահպանելու համար։

Իսկ ամենագլխավորն այն է, որ ես իմ սեփական աչքերով տեսա, թե ինչպես հայ ժողովուրդը սովետական իշխանության ժամանակ իրականացրել է և իրականացնում է սոցիալիստական շինարարությունը, զարգացնելով իր ազգային կուլտուրան՝ ձեռք բերելով այդ ասպարեզում մեծ հաջողություններ։

Ես անսահման հիացած եմ այդ հերոսական մեծ և հին ժողովրդից։ Ես շնորհակալություն եմ հայտնում այդ ժողովրդի կուլտուրական շրջանների ներկայացուցիչներին՝ գրողներին, գիտնականներին և արվեստի գործիչներին, նրանց ցույց տված սիրալիր ընդունելության համար։ Ես եկել եմ ողջույնի խոսք բերելով հայ ժողովրդին չին ժողովրդի կողմից և այժմ մեկնում եմ, տանելով հայ ժողովրդի բարեկամության ըղգացմունքը դեպի չին ժողովուրդը։ Հրաժեշտ տալով, ես ուզում եմ արտահայտել հետևյալը՝ չին և հայ ժողովուրդները միասնական վեհ գաղափարով դիմում են միևնույն բարձր նպատակի և դրա հիման վրա ամրապնդվում է չին և հայ ժողովրդի բարեկամությունը, որ երբեք չի խախտվի։